ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՄ ՇՄԱՎՈՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 2 ՀՈԴՎԱԾԻ, «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 26 ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ, «ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 2 ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ, ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 115 ՀՈԴՎԱԾԻ ԵՎ 118 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

Հաշվի առնելով, որ առաջացել է գործին առնչվող որոշ փաստաթղթերի (մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ վարչական ակտերի դատական վերահսկողության վերաբերյալ 2004թ. դեկտեմբերի 15-ի (2004)20 հանձնարարականի և ՀՀ դատական դեպարտամենտի իրավական վերլուծության) ՍԴ անդամների կողմից համակողմանի ուսումնասիրության անհրաժեշտություն, և, որ այդ փաստաթղթերի պատճենները պետք է սահմանված կարգով տրամադրվեն դիմող և պատասխանող կողմերին, ուստի «Քաղաքացի Արամ Շմավոնյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2 հոդվածի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26 հոդվածի 5-րդ, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի 2-րդ մասերի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115 հոդվածի և 118 հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի դատաքննությունը հետաձգել և սկսել 2008 թվականի նոյեմբերի 21-ին, ժամը 11.00-ին։

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 6-րդ մասի հիման վրա գործի դատաքննությունն անցկացնել բանավոր ընթացակարգով։

3. Այդ կապակցությամբ ուժը կորցրած ճանաչել սահմանադրական դատարանի 10.06.2008թ. ՍԴԱՈ-52 աշխատակարգային որոշման 3-րդ կետը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16 սեպտեմբերի 2008 թվականի
ՍԴԱՈ-69